

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի (ծածկագիր 3.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար

21.06.2019

Տիպ՝ [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)
Հայտատու՝ Ջրառատի համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր (ծածկագիր 3.1-1) պաշտոնն զբաղեցնելու համար.

Իրականացնում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառման գործառնությունները, կազմում է ֆինանսական հաշվետվությունները, ապահովում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրության պահանջների կատարումը: Իր լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառմանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին ու ճիշտ կազմելու համար: Կատարում է Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները: Իր լիազորությունների սահմաններում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և Աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է.

Առնվազն միջնակարգ կրթություն, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության եւ իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Մրցույթը կանցկացվի 2019 թվականի հուլիսի 23-ին, ժամը 12.00-ին Ջրառատի համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ջրառատ Արարատյան 8):
Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող քաղաքացիներ:

Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,
 - տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,
 - անձնագրի պատճենը:
3. Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ 2011թ. դեկտեմբերի 15 N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
4. Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարան /գ. Ջրառատ Արարատյան 8/ կամ ՀՀ Արմավիրի մարզապետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն՝ ք. Արմավիր, Արուսյան 71, հեռ. 0237-2-07-70, 0237-2-76-49 /:

Դիմումներն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-ից մինչև 17:00-ը բացի շաբաթ և կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019թ. հուլիսի 10-ը՝ ժամը 18:00-ն:

Էլեկտրոնային հասցե՝ armavir@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Ջրառատ Արարատյան 8

Հեռ.՝ +374 93541556

Էլ. փոստ՝ jratgyux@mail.ru

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Ջրառատ համայնք

Հեռ.՝ +374 93 541556

Վեբ կայք՝ <http://www.jrat.am/Pages/Home/Default.aspx>

Էլ. փոստ՝ jratgyux@mail.ru

